




Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թափին 2 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ՍՐԾՐՈՒՆԻ

Ամսիս 24-ին, կիրակի օրը, ժամը 1-ին, հանգուցեայ

ԽՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԻ

գերեզմանի վրայ, որ գտնվում է Վանքի առաջ եկեղեցու դռնի մոտ, կը կատարվի թաղ-
ման քառասունօրեայ կարգ:

Վաղը, կիրակի, դեկտեմբերի 24-ին,

ԵՓԵՍՈՍ ԳԵՈՐԳԵՍԻԱՆ ԵՊԻՍԿՈՍՆԵՐԻ

մահվան քառասունօրեայ օրը կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ
Թանգոյան եկեղեցում (քանդակարանի կողքին, բնակարանի դպրոցի հանդէպ), որի մասին
տեղեկացնում են ծանօթներին և ազգականներին հանգուցեայի որդիները—բժիշկ Մի-
քայէլ Գեորգեան և Նիկոլայ Գեորգեան Աղաջանեանները: Պատարագի սկիզբն է 10½
ժամին, հոգեհանգիստը 11½-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիշեցէ՛ք կարօտներին. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Արձագանքներ. Բազուկ
նախարարներին արտակարգ ժողովը.
Օպերային ներկայացումները. Նամակ Խմբագ-
րութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բոլորաշայից. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տը-
պագրութիւն:

ՅԻՇԵՑԷ՛Ք ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻՆ

Դուք, ունեւորներդ, որ պատրաստվում
էք Նոր-Տարվայ և Մոսկովի տոները կատա-
րելու, որ գնում էք նուէրներ ձեր զա-
ւակների համար, որ պատրաստվում էք մի
շարք զուարճութիւններ և խնջոյքներ,
իշխեցէ՛ք և ձեր այն եղբայրներին և քոյ-
րերին, որոնք ոչ միայն չեն կարող աւելորդ
զուարճութիւնների և զարդարանքների
մասին մտածել, այլ և ապահովված չեն
նոյն իսկ ամենօրեայ իրանց պիտոյքների
կողմից: Մտաբերեցէ՛ք չքաւոր ընտանիք-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Միւսնայ երկրի Սիւրան գաւառում հո-
տում է բաւական յորդ ու լեռնային մի գետ,
Որոտն անունով, որ գալիս անցնում է Տա-
թևի վանքի մոտով: Այդ գետի ձորում, Տա-
թևից բաւական հեռու դէպի հիւսիս-արեւ-
մուտք, այժմ տեղադրված է մի փոքրիկ ու
աննշան գիւղ. նրա անունն է Անգեղակոթ:
Որոտն գետը, անցնելով գիւղի առջևից, մի
գեղեցիկ տեսարան է բաց անում: Այս է միակ
նշանակիչ հանդիմանքը. մնացածը ներկայաց-
նում է Սիւրանի յատուկ աղքատութիւնը և
կորածութիւնը: Գիւղի այժմեան բնակիչները
նոյն իսկ ընկիւնը էլ չեն. եկուոր են Պարս-
կաստանից: Բայց XVII դարի վերջում Անգե-
ղակոթ մի գեղաբնակ էր, ուր բնակվում
էր տեղային մէլիքը, Սաֆրազ կամ Շափրազ
անունով: Անա այդ մէլիքի մօտ գնաց Օրին,
և Անգեղակոթը այնուհետեւ հասցրեց իր ա-
նունը նոյն իսկ եւրոպական արքունիքներին:
Մէլիք-Սաֆրազը 1678-ին էջմիածնում դու-
մարված դադարի ժողովին մասնակցողներից
մէկն էր: Օրին նրա մօտ այլ եւս չը թաղարեց
իրան. նրա համար դժուար չէր թէ հաւատ-
տիքներ ներկայացնէր, որ ինքը Օրին է և թէ
բաց անել նրա առաջ իր քաղաքական ձեռնար-
կութիւնը: Լեռնից կիսանկախ իշխանը ուրա-
խութեամբ ընդունեց այդ անախկալ հիւրին
և մեծ համակրութեամբ վերաբերվեց հին
ծրագիրը նոր մանրամասնութիւններով վերա-

ների երեխաներին, որոնք նոյնպէս ցանկա-
նում են մի ուրախութիւն ունենալ այս
տօն օրերին: Մտաբերեցէ՛ք տկար ու հի-
ւանդ խեղճերին, որոնք անկարող են ա-
ռանց կողմնակի օժանդակութեան ապա-
հովել իրանց և կաղզուել իրանց քալ-
քայլած առողջութիւնը:

Մեր երկրում կան մի քանի տեղեր,
ուր հունձը անբաւարար եղաւ, կամ ցանքը
վնասվեց զանազան պատահարներից: Այդ-
պիսի տեղերի թւումն է և Արաբաշաքի
գաւառի այն մասը, որ ենթարկվեց մի-
ջատների սարսափելի աւերումներին: Դա-
ւառի բաւարար մասը վնասվեց և կարօտե-
թեան մէջ է, բարեգործութիւնը կարող
էր սովորեց և անտանելի զրկանքներից ազա-
տել շատ կանանց և երեխաներին, որոնք
սպասում են օգնութեան պանդխտու-
թեան գնացած իրանց աղամարդկանցից:

Ուրախացէ՛ք և զուարճացէ՛ք բայց հա-
նցեցէ՛ք ձեր ունեցածից մի մաս ևս կարօ-
տեալների համար: Երբ որ այդ կաննք,
զուք հանգիստ սրտով կարող կը լինէք
անձնատուր լինել ձեր զուարճութիւննե-
րին, զգալով, որ ձեր ընտանիքից դուրս

կենդանայնելու մտքին:

Բայց Իսրայէլ Օրին ամենից առաջ ձեռնար-
կեց մի գործի, որ գեղեցիկ կերպով բնորո-
շում է նրա կազմակերպող ընդունակութիւնը,
քաղաքագիտական ներամտութիւնը, Հայ մէ-
լիքներից մէկը, Մարտիրոսի որդի Ամիր բէկը
թշնամացել էր Սաֆրազի հետ. և ինչպէս այս
յատուկ է լեռնային տեղաբնակներին ու հա-
մայնական օգուտների մասին հասկացողու-
թիւն չունեցող ժողովրդին, Ամիր-բէկը չգրու-
միացել էր տեղացի մահմեդական իշխանների
հետ, որպէս զի Սաֆրազին համար ուժեղ և
չափ փառակար թշնամի դառնալ: Օրին նախ
խօսեց՝ այդ թշնամութիւնը վերացնելու և նրա
տեղ կատարեալ հաշտութիւն հաստատելու
մասին. Անգեղակոթի տեղը բարեբաղից այդ
առաջարկութիւնից և յայտնեց, որ հաշտու-
թիւնը երբէք չի կայանայ: Բայց Օրին սկսեց
համոզել նրան, ցոյց տուեց թէ որքան վտան-
գաւոր է այդպիսի կատաղի թշնամութիւնը
երկու ազգեցիկ իշխանների մէջ, երբ անհրա-
ժեշտ է, որ երկրի բոլոր առաջաւոր ոյժերը
միանան, մի հոգի դառնան: Կաղեցնելով Սաֆ-
րազին, նա գնաց Ամիր-բէկի մօտ, որը ակզ-
բում նոյնպէս կատաղեց Սաֆրազի հետ հաշտ-
վելու մտքից, բայց յետոյ, երբ Օրին ասաց,
թէ երկու տների թշնամութեան պատճառով
չէ կարելի վտանգի ենթարկել ամբողջ երկրի
չափերը, նոյնպէս զիջեց: Հաշտութիւնը կայա-
ցաւ և հաստատվեց Ամիր-բէկի 10-ամեայ
աղջկայ և Սաֆրազի 14-ամեայ աղայի նշա-
նագրութեամբ:

Դա մի գեղեցիկ նշան էր: Մոռանալ այդ-
քան սուր կերպարանք ստացած թշնամութիւն
ընդհանուր մեծ գործի համար, եղբայրութեան
ձեռք մեկնել իրար՝ համերաշխ ու հոգեկից լի-

մի քանի մարդկանց էլ դուք ուրախութիւն
էք պատճառել:

Յիշեցէ՛ք չքաւորներին և կարօտեալնե-
րին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մինչև այժմ մենք հաւատացած էինք թէ
միայն ուսանողներն են, որոնց մեծամասնու-
թեան ճակատին դրոշմված է քրո երեսի քրո-
տինքով հայ ուսեալ՝ բիրիկական հրամանի ա-
մենախիստ և անողորմ դործադրութիւնը: Բայց
կան մեղանում և շատ ուսանողներ, մի
երեւոյթ, որ մենք, ամենայն իրաւունքով,
պարծառք ենք համարում: Բանից դուրս է
գալիս, որ նա ուսանողներն էլ ազատ չէ
նոյն դառն ճակատագրից, նա էլ ստիպված է
կէս-քաղցած, կէս-կուշտ կեանք վարել: Հե-
տեանքները յետէ տղամարդը չը կարողանա-
լով դիմանալ անտանելի պայմաններին, կորց-
նում է հաւասարադատութիւնը և մենք շատ
անգամ ականատես ենք լինում անժամանակի,
ցաւալի զոհերի, ինչ պէտք է լինի հայ օրիոր-
դի դրութիւնը նոյն այդ պայմանների մէջ:
Վերին աստիճանի կսկծեցող են այն տեղե-
կութիւնները, որ հաղորդում է Կ. Պոլսի
«Սուրհանդակ» լրագրի ժընովի թղթակիցը,
որ ստորագրել է իր նամակը «Ուսանողների
մը» անունով: Թողնելով ամբողջ պատասխա-
նատութիւնը այդ լրագրի և թղթակցի վրա,
մենք այստեղ բերում ենք մի կտոր, վաղորօք
յայտարարելով, որ մեզ անհաւատալի է թուում
նրա մէջ շատ բան:

Այդ ուսանողներները (խօսքը ուսանալ
ուսանողների մասին է) իրանց ձեւերով,
չարժուներով և այլն, երբէք չեն տարբերի
ուսանողներէն: Չունին այն անմեղ չարժու-
ները, կուսակա՛ն նախաձեռնելը, ամօթխա-
նութիւն և այլն, որ կը գտնուի Պոլսեցի օրի-
որդին ըզրի: Ինչ որ պարտաւոր դրաճիւտեալ
մը կը կարծէ ըլլալ կրեւորուն դերը 500 տա-
րի յետոյ միայն (!) մենք ունինք ատոր մէկ
պատկերը, քիչ մը բարեւոքած ձեւին տակ
մեր աչաց առջև:

Սոսկալի է ասածել թէ օրիորդ մը, 18—
20—25 տարեկան, կարելի բան է որ առա-

նելու համար այնտեղ, ուր ամենից առաջ և
ամենից շատ միաբանութիւն և անձնական
կրքերի անհետացում էր պահանջվում—այս-
պիսի երեւոյթ շատ չէ տեսնված հայերի մէջ, և
Օրին կարող էր կատարեալ վստահութեամբ իր
չորքը հաւաքել լեռնի իշխաններին: Անգեղա-
կոթում սկսվեցին խորհրդածութիւններ, որոնց
մասնակցում էին տասն մէլիքներ, հաւաքված
Սիւնիքի և Ղարաբաղի զանազան կողմերից:
Խորհրդածութիւնների հոգին, ի հարկէ, Օրին
էր. նա էր գեղակաւրում, բացատրում ամեն
ինչ, բայց անում իր մեծ ծրագրի մանրամաս-
նութիւնները: Եւ նրան լուծ էին առանց հա-
կառակութիւնների, միաբանա՛ Մէլիքները ման-
րամասն տեղեկութիւններ էին տալիս ներկայի
և անցալի մասին, բացատրում էին թէ ինչ-
պէս կարելի ու յարմար է սկսել գործողու-
թիւնները. այնպէս որ քսան երկար տարիներ
հայրենիքի երեսը չը տեսնու Օրին մի կարծ մի-
ջոցում դարձաւ հարուստ տեղեկութիւնների
տէր և երկիրը ամեն կողմից ուսումնասիրած
մարդ:

Նոյն իսկ կրօնական հարցն էլ անհամաձայ-
նութիւններ չառաջարեց Անգեղակոթի ժողո-
վի մէջ: Չը նայած առանձնապէս լեռնական-
ներին յատուկ ւսանողականութեան, մէլիքները
առաջարկութիւն չունէին և այն բանի գէշ, որ
հայերը Հոռօմի հպատակ դառնային. ժողովրդի
առաջնորդները այնքան ոգևորված էին հայրե-
նիքի ազատութեան գաղափարով, որ միաձայն
ընդունեցին դաւանափոխութեան առաջարկը:
Պէտք էր ընդունել տալ այդ վճիռը նաեւ հո-
գեւորականութեան: Էջմիածինը մերժել էր
միանալ նոր սկսվող շարժման, բայց կար մի
այլ կաթողիկոս, որի թեմը Ղարաբաղն էր: Դա
Աղուանից կաթողիկոսն էր, որ նստում էր Գան-

ւօտէն մինչև իրիկուն մէկ կողմէն միւս
կողմ վաղէ, առանց կարեւորութիւն տալու
անձրեւին, ձիւնին, առաւօտուն համալսարան,
յետոյ բնակութեան վարժարան, բժշկական
վարժարան, որոնք առնուազն քաղաքի ժամու-
հեռաւորութիւն ունին: Ասոնց փոխարէն հա-
զիւ անկողին մը, սեղան մը և երկու աթոռ
ունին, և օրը հազիւ անգամ մըն ալ խղճուկ
ճաշարանի մը մէջ կը ճաշեն:

Վերջապէս կեանք մը որ հոս տեղի գոր-
ծաւորն ալ չի վարեր: Այդ կեանքն է ահա
որ ատենը մէլմէլ անպարկիշտ էակներ դար-
ձուցած է. իրենց համար ամեն չափ վերցած
է, խտրութիւնը, մտածելով գործելը և այլն:
Եւ պէտք չէ յուսալ թէ ատենը օր մը իբր
բժիշկ պիտի հանդիսանան հասարակութեան
առջև: Ոչ, 2—3 տարի հետեւելէն յետոյ,
մէլմէլ պատճառներով կը ձգեն ամեն ինչ,
և կը հեռանան ուսանողական կեանքէն,
արդէն բարոյապէս և ֆիզիքապէս լրմն-
ցած: Չընենք թէ ուսանողական կեանքն է
որ զանոնք այդ վիճակին կը դատապարտէ,
նչ, որովհետեւ իրենց հետ միեւնոյն նստա-
րանին վրա առաւօտէն մինչև երեկոյ միեւ-
նոյն մթնոլորտին մէջ ժընկղթի ուսանողու-
նին ալ կանգնէ ժամանակը: Բայց անիկա
ունի օրիորդի մը պատշաճ շարժումները,
ձեւերը: Ան ալ կը տեսնուի ուսանողնե-
րուն հետ: Բայց ինչ տարբերութիւն լուս-
ուսանողներին և ժընկղթի միջև: Նոյն
իսկ իրենց մէջ բացառութիւններ կան, ո-
րոնք միշտ աչքի կը զարնեն: Յիշուի ցա-
ւալի է այդ օրիորդներուն վիճակը, որոնց
այդպէս ըլլալուն բուն պատճառը իրենց
ծնողն է:

Այս թղթակցութեան միջից մենք վերց-
նում ենք հայ ուսանողներու անապատով դրու-
թիւնը և առանձնապէս շեշտում ենք նրա
վրա, զու յայտնելով, որ մեր իրական սեռը իր
ինքնաճանաչութեան և առաջադիմութեան
հէնց առաջին քայլերում ստիպված է ընդհա-
րկել երկրասարքը հասակի այն սոսկալի թշնա-
մու հետ, որ չքաւորութիւն անուն ունի: Իսկ
միւս մեղադրանքները, որ բարդում է հայ ու-
սանողների վրա Կ. Պոլսի լրագրի թղթա-
կիցը, մենք բերում ենք այստեղ միայն մի նը-
պատակով: Մենք չափազանց յարգում ենք
հայ ուսանողներին դասակարգը, չափա-
զանց մեծ հաւատ ունենք նրա վրա, և հէնց
այս պատճառով չէինք կանխապ թաղանայ
պիսի ծանր ամբաստանութիւններ, որոնք ար-

ձատարի վանքում: Նրան էլ դիմեցին մէլիքնե-
րը, Անգեղակոթից գալով Գանձասար Օրիի
հետ: Ժողով կազմվեց, և Օրին սկսեց բացատ-
րել թէ ինչ վնասներ են առաջացել եկեղեցի-
ների բաժանումից, թէ որքան լաւ է թշնամու-
թեան և հակառակութիւնների տեղ հաստա-
տել քրիստոնէական համաձայնութիւն, ցոյց
տուեց թէ այդ համաձայնութիւնը որքան խո-
չոր դեր պիտի կատարէր այն գործի մէջ, որի
համար ինքը եկել էր Եւրոպայից: Այստեղ
Պէտք էր միանալ Հոռօմի եկեղեցու հետ. այդ
միտքիւնը մի անհրաժեշտութիւն էր, որով-
հետեւ եւրոպական մի ազգեցիկ միապետ պատ-
րաստ է ազաւորել հայերին մահմեդական լուծից:

Անկարելի է, որ վանքում յարուցելով կրօնա-
կան խնդիր և նա կրքեր չը բորբոքէ, սուր
վէճեր չառաջացնէ: Գանձասարի միաբանու-
թիւնը ընդգրկուցաւ այդ մտքին: Օրին ստիպ-
ված էր դաւանաբաւական վէճ սկսել երկու
վարդապետների հետ և ապացուցանել նրանց
ողբաբանութիւն—մի բան, որ այն ժամանակները
առհասարակ կարօտ չէր ապացուցանել:

Եւ այսպէս, հայ հոգեւորականութիւնը ամեն
տեղ բացասաբար էր վերաբերվում Օրիի բե-
րած քաղաքական ծրագրին: Դա մի շատ նշա-
նաւոր խոչընդոտ էր: Օրիին հարկաւոր էր
տանել իր հետ հայ հոգեւորականներից մէկին
իրեւել երաշխաւորութիւն, թէ աշխարհական
դասակարգի և հոգեւորականութեան մէջ դո-
լութիւն ունի կատարեալ համաձայնութիւն
սկսվող գործի վերաբերմամբ: Առանց հոգեւո-
րականի մասնակցութեան ոչ կրօնական միու-
թեան հարցը կարող էր բաւարար լուծում
ստացած համարվել, ոչ էլ բանակցութիւնների
համար Եւրոպա ուղևորվող պատգամաւորու-
թիւնը կարող էր ազգի ներկայացուցիչ լինել:

դէն հրապարակ են հանված, կարգադրել են շատ տեղերում եւ, ով գիտէ, շատ ու շատ սրտեր են աւերել: Մենք կը կամենայինք, որ հայ ուսանողուհիները հրապարակով էլ վերցնէին իրանց անուան կայքքանդակը անուանականները: Դա անպատշաճ հարկաւոր է, որ պէտք չի չընդհատուի այն համակարգի հոսանքը դէպի բարձրագոյն ուսումը, որ օր օրի վրա նկատելի է դառնում մեր մէջ: Մեզանում առանց այդ էլ շատ եւ շատ նախապաշարմունքներ կան կնոջ կրթութեան դէմ: Եթէ այդ նախապաշարմունքները վրա աւելանան եւ այս տեսակ մեղադրանքներ, որոնք առանց հերքման մնալով կարող են շատ ու շատ ծնողներ վարակել, այն ժամանակ աւելի եւս կը դժուարանայ հայ օրիորդի դրութիւնը, նրա ոյժերից վեր կը լինի թէ նախապաշարմունքների պատր պատուել եւ թէ համալսարանական կնոջներին հասնող այսպիսի ձայները խրախուսել...

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
XXVIII

Կապիտալիստական կազմակերպութեան ընտրուած դերերը մէկն էլ այն է, որ հասարակական ոյժը բուռնօրէն ու սուր բռնող ձեւերից հետո՝ հետէ անցնում է փողոտային ձեւեր: Հոգեւորականութեան եւ ազնուականութեան կողմէն բռնում է մի նոր զեկակարիչ դասակարգ, որ, հետզհետէ հրելով իր աթոռակիցներին, աշխատում է բռնել ամբողջ տեղը եւ աստուածայեանական ու ազնուականական սկզբունքները փոխարինել փողոտայեանական սկզբունքներով: Այդպիսով առաջ է անցնում ու հաստատուում պրոլետարատիան: Նորածին կապիտալիզմը այն երկխոսներից է, որոնք, մեր դիւցազններգութեան Մհերի նման, օրէցօր են աճում եւ արդէն օրօրոցում հսկայական ոյժ են ցոյց տալիս:

Զարմանալի չէ ուրեմն, որ Կովկաս համեմատաբար նոր ժամանակները ոտք դրած կապիտալիզմը ստեղծել է մեր երկրում, մասնաւոր հայերի մէջ, պրոլետարատիական դասակարգ իր պրոլետարատիական ախորժակներով:

Թիմարութեան կամ չարամտութեան հետեւանք է ի հարկէ անուանել հայերին զուտ վաճառականական ազգ, բայց ճիշտ է անկասկած, որ Կովկասում չը կայ ուրիշ ոչ մի տարր, որ հայերի չափ պատրաստված հող ներկայացնէ կապիտալիզմը, իր ամբողջ լոյսով ու ստուերով, իւրացնելու: Եւ այդ է պատճառը, որ պրոլետարատիան Կովկասեան հասարակութիւններէն ոչ մէկի մէջ այնքան մեծ դեր չէ խաղում, որքան մեզիսում:

Վերջերք մեր բոլոր հասարակական գործերը եւ կը տեսնէք, որ ամեն տեղ փողոտային կամենում են վճռական ձայն ունենալ, հէնց միմիայն այն պատճառով, որ փողոտային եւս Եւ

Ահա թէ ինչ դրութիւն էր ստեղծում էլմիածնի եւ Գանձասարի ցուրտ վերաբերմունքը դէպի Օրին: Բայց այդ արգելքը միանգամայն չը կաշկանդեց հայ մէլիքներին ու անգործութեան չը դատապարտեց նրանք: Գանձասարի մօտ գտնվող ս. Յովորի վանքի վանահայր Մինաս վարդապետ Տիգրանեանը միայն մէլիքների հետ եւ համաձայնվեց Օրինի հետ Եւրօպա գնալու: Այդ վարդապետը թէեւ հայ հոգեւորականութեան պաշտօնական ներկայացուցիչը չէր, լիազօրութիւններ չուէր նրա կողմից, բայց եւ այդպէս Օրին կարող էր գոհ լինել եւ այդքանով: Նա մէլիքների հետ Գանձասարից վերադարձաւ Անգղիայով: Գանձասարը թէեւ այսպիսի ստանդարտներ էր ընդունում հայերի առաջին ազատական փորձը, բայց չուտով պիտի դառնար Անգղիայից: Եւ ահա հոգեւորականութիւնը Օրինի կողմից զոհ լինելու եւ այդպէս մի ամբողջ դարի ընթացքում կենսորոնացած էին հայերի պատմաբանական շարժումները եւ բանակցութիւնները քրիստոնէայ պետութիւնների հետ: Ինքը, Օրին, չուտով պիտի տեսնէր, որ Հայաստանի վանքերի մէջ միայն իրաւունք ու հոգեւորականութիւնը չէր գտնուում: Անգղիայից վանքը պիտի ամենայն եռանդով շարունակէ այն գործը, որի հիմքը դնում էր ինքը:

Գործողութիւնները կատարվում էին արագ ու շատապ: Օրին իր հայրենիքում մնաց մի ամիս ոչ աւել եւ այդքան կարճ միջոցում ամեն ինչ կարգադրված վերջացած էր: Անգղիայից փողովը պատրաստեց մի բանի թղթեր: Նախ եւ առաջ գրեց Հովմի պապին մի աղերսագիր, թէ հայ ժողովուրդը պատրաստ է մանել ս. Պետրոսի հօտի մէջ եւ աղաչում է աջակցել իր ազատութեան գործին: Մէլիքները, որպէս զի հասկացան պապին, թէ ինչեւ այդ առաջարկութիւնը իրանց կողմից է անվում, առանց հոգե-

մեր պրոլետարատների ախորժակները այնքան զարգացել են արդէն, որ նրանք յաւակնութիւն ունեն գեկակարել գործերը ոչ միայն իրանց բնական տեղում, այլ եւ հեռուոր քաղաքներում, որոնց հետ կապված են ծագումով կամ մի այլ պատճառով:

Եւ այդ յաւակնութիւնները մեծ մասամբ պատկուծ են աշխուժեցման, շնորհիւ այն հանգամանքի, որ մեր ազգային գործերի զեկակարները, եւ զլիաւորապէս էլ ինքնին, առանձին թուրութիւն են զգում դէպի հարուստները, եւ միւս կողմից այն պատճառով, որ կապիտալիզմի ստուերային, առանց այն էլ շատ զօրեղ, կողմերը առանձնապէս լաւ հող են գտել մեզիսում, մինչդեռ կապիտալիզմի բարերար կողմը, որ առանց այն էլ մի սաղմ է, թէպէտ մեծ զարգացման ընդունակ սաղմ, շատ քիչ նիւթ է գտնում մեզիսում աճելու ու զօրանալու համար:

Այդ է պատճառը, որ մեզում մի ամբողջ հասարակութիւն, ինչպէս Շուշու հասարակութիւնը, կարող է մի քանի տարվայ ընթացքում փոխել իր բարոյական կերպարանքը եւ թեմական դպրոցի հարցում էլմիածնի նկատմամբ ուղղակի ինկուրց յետոյ ԱՆԴՐՈՒՄԻՆԻՅԱՆԻ ԴԱՆՆԱՐ:

Այդ է պատճառը, որ Մօսկվայի համայնքը չէ կարողանում ունենալ իր ցանկացած քահանային, որովհետեւ քահանայացու անձը բախտ չունի ամենագոր պրոլետարատների բարեհաճութիւնը վայելել:

Այդ է, վերջապէս, պատճառը, որ Կաղզուանի ամբողջ հասարակութեանը այժմ չէ աշխուժում իր ձեռքն առնել իր եկեղեցու շինութեան գործը, — եկեղեցու, որ, սակայն, միմիայն Աստուծուն է պատկանում եւ ժողովրդին:

Բժիշկ Կաճկանեան, որ վերջին տարիներս Կաղզուանի երիտասարդութեան դէմ կռիւ էր մղում եւ որի մատուցած հասարակական ծառայութիւնները, սակայն, անասթութիւն կը լինի մոռանալ, այժմ, միացած այդ երիտասարդութեան հետ, պնդում է, որ Զաքար աղա Զանփօլաղեան, որ յանձն էր առել շինել իր հաշուով Կաղզուանի եկեղեցին, «Եթէ Եւ Կաղզուանի հասարակութեան հասցէին» (Մշակ № 228): Այդ փաստը մեզ իրաւունք է տալիս, կրկնելու «Մշակի» թղթակիցների եւ Կարսի յաջորդ Եղիշէ վ. Մուրադեանի ասածը, թէ այդ հարցում ալ, Զաքար Զանփօլաղեանը մենակ է ամբողջ հասարակութեան դէմ եւ չը նայելով դրան յոյս ունի այդ հարցում վերջնական յաղթութիւններ տանել միմիայն այն պատճառով, որ հարուստ է:

Ասացէք խնդրեմ, համապատասխանում է արդեօք այդ մեր ժողովրդական եկեղեցու աւանդութիւններին եւ ինչիցն է արդեօք, որ մենք այնքան տրամադիր ենք աւանդապահ լինել միմիայն վատ աւանդութիւնների վերա-

ւոր դասակարգի մասնակցութեան, դանդաղում էին իրանց կաթողիկոսների վրա, որոնք, ասում էին, իրանց փառասիրութեան համար մոռացել են հօտի շահերն եւ կողոպտում են եկեղեցիները: Ապա պատրաստվեց հաւատարմաթուղթ, որով ժողովը տալիս էր Խորաշէ Օրինի եւ Մինաս վարդապետին անսահման լիազօրութիւններ՝ բանակցութիւններ վարելու ամեն տեղ, ուր հարկաւոր է եւ այն պայմաններով, որ այդ երկու հաւատարմարարները յարմար կը համարեն: Պիպայի կուրֆիւրստին ուղղած աղերսագրի մէջ մէլիքները երդվում եւ հաւատացնում էին թէ իրանք եւ իրանց ժողովուրդը ոչինչ չեն խնայի — ոչ կենքը, ոչ գոյքը, ոչ առնաստիակ ամեն տեսակ զոհողութիւն՝ իրանց երկրի պաշտութեան համար:

Որքան անկեղծ էին այդ խոստումները: Ահա վերջացել են խորհրդածութիւնները, թղթերը պատրաստ են եւ ստորագրված: Անգեղակոթում մեծ խնձոյք է, Նոր, Թարմ, կենդանաբար գաղափարը դարձանային այդ անուշաբոյր, անմոռանալի օրը (ապրիլի վերջն էր) մտել է իւրանց պարզամիտ եւ կրօնով մարդկանց չըջան, ոգեւորութեան, հրճուանքի բարձր աստիճանին է հասցրել նրանց: Իր վերածնութեան առաջին քարերը դնող ժողովուրդը կայտաւ ու աշխուժ է լինում երեւայի պէս եւ յափշտակվող՝ իբրեւ ամենաթափաք սիրահարներից: Մէլիքները տօնում են խաւարի մէջ ծագող արշալոյսը: Օրվայ հերոսը Օրին է. նա էր ոգեւորել, վառել այդ մարդկանց: Իր հետ բերել էր Պիպայի կուրֆիւրստի եւ նրա տիկնոջ, ինչպէս եւ կայսրի ու կայսրուհու պատկերները, որ գնել էր Վիեննայում: Եւ յարկած հանում է այդ պատկերները, եւ ժողովականները տեսնում են իրանց հեռուոր, ան-

բերմամբ եւ այնքան պատրաստ՝ ոտնատակ տալու համակրելի աւանդութիւնները, մասնաւոր երբ այդ պէտք է լինի պրոլետարատիայի հաճոյքի համար:

Տ. Յ.

ԲԱԳՈՒԻ ՆԱԽԹԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎՐ

Պետական նախարարի հողերը, ինչպէս յայտնի է, տրվում են կապալով: Կապալառուները իրանց ծախսով նախ են արդիւնաբերում եւ ստացած կամ ստանալի նախ քանակութեան համապատասխան տուրք են վճարում գանձարանին: Մինչեւ այժմ աճուրդով տրվող այդ հողերի համար որոշված էր պուշպիւմար. ստացած իւրաքանչիւր պուշ նախի համար որոշված էր տրվում գանձարանին դրամով: Բարձրագոյն հրամանով հարց է ծագել այժմ պուշպիւմարի փոխարէն կապալառուներից ստանալ արդիւնաբերած նախի որոշ տոկոսը, ինչպէս ստանում են մասնաւոր սեփականատէրերը: Յայտնի տոկոս որոշելուց յետոյ, գանձարանից կախված կը լինի նախի տրվում կամ դրամով ստանալու ցանկութիւնը:

Նախի փոխարէն դրամ ստանալու համար պէտք է որոշեալ գին ունենալ եւ այդ գնով գնահատելով՝ փողոս ստանալ. սակայն որոշեալ գին նախի համար չը կայ մշտապէս. նա տատանվում է, եւ տատանվում է ոչ միայն ամբողջ տարվայ ընթացքում, ոչ միայն ամիսների, այլ եւ յաճախ օրվայ ընթացքում: Եւ բարձրանում, եւ իջնում է, նայելով թէ ինչ հանգամանքներ են տեղի ունենում: Ահա հէնց նախի այդ միջին գինը որոշելու խնդիրն էր, որ խորհրդածութեան նիւթ էր դարձել նախարարիւնաբերողների ժողովի երրորդ նիստում: Ժողովականները միջին գինը որոշելու համար առաջարկում էին առաջնորդել տեղական բօրային ունեցած տեղեկութիւններով, թէ կուզէին տարվայ ընթացքում բօրային գիտութեամբ տեղի ունեցած առեւտրային գործողութիւնները հիմք ընդունել, որոշել միջին գինը եւ այդ գնով հաշուել պետական գանձարանին հասնելի նախի քանակութիւնը:

Այդ առաջարկութեան դէմ էին կովկասեան լեւոնային վարչութեան եւ պետական կալուածների մինիստրութեան ներկայացուցիչները: Նրանք բաւարար չէին համարում բօրային ունեցած տեղեկութիւնները. նրանք անհրաժեշտ էին համարում կազմակերպել յատուկ մասնաժողով, բաղկացած նախարարիւնաբերողների եւ պետական գանձարանի ներկայացուցիչներից եւ ոչ թէ միայն նախարարիւնաբերողների ներկայացուցիչներից, որոնցից կազմված է բօրային երկար վիճարանութիւններից յետոյ, որոշվեց ընդունել բօրային տեղեկութիւնները հիմնաւոր եւ նրանցով էլ առաջնորդել նախի միջին գինը որոշելու ղեկավարութիւնը:

Ժամօթ բարերարին: Հրճուանքը աւելի սաստկանում է, Հոնոսի ափում ապրող մարդու պատկերը պաշտամունքի առարկայ է դառնում Միւսնեան աշխարհի այդ կորած, խեղճ անկեղծում: Մոմեր են վառում, դնում պատկերների կողքին — ճիշտ այսպէս էլ այդ ժողովուրդը պատուում է իր սուրբերին: Գաւաթներով խմում են քրիստոնէայ խիւսի կենացը. ով ուզում է մի բան ստել, նախ զլուծել է տալիս պատկերներին եւ ապա միայն բերանը բաց անում: Ծագում է հարց, թէ ո՞ւմ մօտ պիտի մնան պատկերները: Համաձայնութիւն, ի հարկէ, չէ կայանում. վերջապէս, տեղական քահանայ յայտնում է, թէ պատկերները ինքը կը դնէ եկեղեցում, ուր նրանք ամենքի սեփականութիւնը կը լինեն:

Այսքան արագան չըրեւանադութեամբ էին վերաբերվում լեւոնայինները Խորաշէ Օրինի սկսած գործին:

Արեւելեան հարցի այն մասնիկի համար, որ հայերն էին ներկայացնում, Օրին չէր կարող մի ուրիշ լուծում գտնել, բացի գործողութիւններից: Այն հանաւոր, որ միակ հարաւորն ու իրականն էր մահմեդական արեւելքում ապրող բոլոր քրիստոնէայ ազգերի համար: Մենք տեսանք, որ ամեն տեղ ապաստում էր մի եւ նոյն բանը — եւրօպական արշաւանք, միայն տեղեկութիւններ պատասխանութեան հետ: Այս էր եւ Օրին ծրագրի հոգին:

Բայց Հայաստանը, ենթարկված լինելով արեւելեան քրիստոնէաների ընդհանուր ճակատագրին, ներկայացնում էր այդ տեսակ ազատութեան հանելու շատ դժուարութիւններ: շնորհիւ իր աշխարհագրական դիրքին — նա չըրաւ պատկանել իր մահմեդական ազգերով, հետեւ էր ծովին եւ եւրօպական ոչ մի պետութեան

բռնել ցանկութիւնը, որ արտայայտվեց նիստի վերջը, այն էր, որ պետական գանձարանի հետ այդ հաշիւը տեսնվի ամսէ ամիս, ամսվայ ընթացքում տեղի ունեցած գների միջին գնով, եւ բայց դրանից, մի տարի առաջ յայտարարվի, թէ գանձարանը ինչ եղանակով է մտադիր ստանալու իրան հասանելի մասը՝ փողով թէ նախիով:

Այս տարի ժողովի նիստերին ներկայ է լինում նաեւ ներքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչ Դ. Բօյնով, որը նշանակվել է Կովկասի կառավարչապետի կողմից: Զորքորը նիստին ժողովականները յայտարարեցին, թէ պ. Բօյնով յայտնեց համաձայն է կովկասեան լեւոնային վարչութեան եւ պետական կալուածների մինիստրութեան ներկայացուցիչների հետ, նա դէմ է նախընթաց վճիռին, որով որոշվում է բօրային ժողովված տեղեկութիւնները միայն հիմք ընդունել եւ դրանցով էլ որոշել նախի միջին գինը. նա այդ եղանակը պետական շահերի տեսակէտից նոյնպէս նպատակաւոր մար չէ գտնում:

Երբ պետական հողերը աճուրդով տրվում են կապալառուների՝ իւրաքանչիւր հողաբաժնի համար որոշված է լինում նախօրէն յայտնի քանակութիւն նախի. այդ քանակութիւնը կոչվում է ամենապակասը, այսինքն թէ մի տարում աճուրդով տրվող այդ հողաբաժնից քանի պուշ նախի կարելի կը լինի ստանալ: Ամեն մի Ն հողաբաժնի համար նշանակվում են առանձին-առանձին քանակութիւններ, նախելով թէ հրտեղ է գտնվում հողաբաժնի, ինչ աւանելութիւններ ունի, որպիսի նախահանքերով է չըրապատված: Նշանակված ամենապակաս քանակութիւնը հիմք է ընդունվում աճուրդի ժամանակ: Դիցուք Ն X հողաբաժնի համար որոշված է ամենապակաս քանակութիւնը 400,000 պուշ. սա նշանակում է, որ ում վրա մնալու լինի X հողաբաժնի, նա պարտաւոր է տարեկան 400,000 պուշի վճար տալ գանձարանին, կը ստացվի այդ քանակութիւնը հողից թէ չէ, 100,000 կը լինի, թէ 1,000,000, այդ ուշադրութեան չէ անվում: Միայն վերջին դէպքում, երբ պարտաւորված ամենապակաս քանակութեան կրկնապատիկ, եւս պատկան է ստացվում, այն ժամանակ պետական գանձարանը այդ աւելորդ քանակութեան վերաբերալ յայտնի դիւլուններ է առնում, աւելի քիչ տուրք է վերցնում: Օրինակ, դիցուք վերոյիշեալ X հողաբաժնի, որի ամենապակաս քանակութիւնը 400,000 պուշ էր նշանակված, 6 կօպէկով վերցված է, աւել է թէ վերցնողը պետական գանձարանին տարեկան պիտի վճարէ 6X400,000 կօպէկ=24,000 ռ., իսկ եթէ քառապատիկ նախի լինի ոչ թէ 400 հազար, այլ 800 հազար, այն ժամանակ աւելցած 400 հազարի համար պիտի վճարվի ոչ թէ պուշին 6 կ., այլ 10% պակաս, իսկ եթէ ստացվի 1,200,000 պուշ որոշված ամենապա-

այնքան մօտիկ չէր, որ հնչտ լինէր զօրքեր եւ պատերազմական ծանրոցներ փոխադրել: Հայաստանի եւ Եւրօպայի մէջ ընկած էր դեռ եւս անագին Թիւրքիան. անհնարին պիտի լինէր մտածել անգամ թէ կարելի է զինուորական մի բանակ անցկացնել այդ պետութեան միջով: Հայերին օգնելու համար, Պէտք էր, ուրեմն, ուրիշ ճանապարհ, եւ Օրին ընտրեց այն երկար ճանապարհը, որ Աւստրիայից լեհաստանի եւ Ռուսաստանի վրայով տանում էր դէպի Կասովի ծովը: Սակայն այդ երկարութիւնն էլ այն անյարմարութիւնն ունէր, որ մեծ ու ծանր բանակ ուղարկել չէր կարելի: Անհրաժեշտ էր, ուրեմն, որ արշաւող զօրախումբը բաղկացած լինէր մեծ մասամբ ձիաւոր զօրքից եւ թնդանօթներից, այն էլ ոչ-մեծ քանակութեամբ:

Ո՞վ պէտք է տար այդքան ձիաւոր զօրք: Պիպայի կուրֆիւրստը այնքան ընդարձակ պատերազմական միջոցներ չուէր, որ կարողանար փոքր ի շատէ նշանաւոր բանակ հանել իր երկրից եւ ուղարկել այնքան հեռուոր տեղ: Հարկաւոր էր, ուրեմն, որ նա ունենար ուրիշ աջակիցներ, որոնք համաձայն լինէին ձեռնարկութեան ծանրութեան մի մասը իրանց վրա վերցնել, հարկաւոր էին դաշնակիցներ: Թէեւ Հայաստանը այնքան կարեւոր հարց չէր եւրօպական քաղաքականութեան համար, որ կարելի լինէր յուսալ թէ պետութիւնները յօժաւորեցին իր կողմին դաշնակցութիւն եւ ինչ խնայի դրամական միջոցներ այդ հեռուոր արշաւանքը ապահովելու համար, բայց այստեղ պէտք էր հաւատալ, թէ կուրֆիւրստի բարեկամական կապերը առաջնակարգ դեր կը խաղան:

(Կը շարունակվի)

կամ քանակութեան եռապատիկը—այն ժամանակ աւելի եւ աւելի պակաս պիտի վճարվի դաժնաբանին. մի խօսքով, որքան շատ նաւթ ստացվի, այնքան էլ աստիճանաբար պակաս պիտի վճարվի, մինչեւ որ հասնէ առաջարկված գին—վերոյիշեալ դէպքում 6 կօպէկէ—կէսին: Այս է պատճառը, որ աճուրդի ժամանակ մեծ գներ են առաջարկվում Այս տարի աճուրդի ժամանակ առաջարկված են նոյն իսկ 12—12³/₄ կ. պտղավճար: Դրա վրա եթէ աւելացնելու լինենք 3—3¹/₄ կ.—մի պտղ նաւթ արդիւնաբերելու ծախսը—կը նշանակէ իւրաքանչիւր պտղի նաւթը պէտք է նստէ 15—16 կօպէկէ, այն ինչ ներկայումս չուկայում նաւթի գինը 12—13 կօպէկէն չէ անցնում: Հասկանալի է, որ կապալաւորները իրանց յայտը դրել են եւ գնում են գլխաւորապէս մեծ քանակութեամբ նաւթ ստանալու վրա. ուրեմն նրանք այն ժամանակ միայն չա՛ն պիտի ունենան, երբ կապալով վերցրած հողաբաժիններէն ստանան որքան կարելի է մեծ քանակութեամբ նաւթ: Այս արտօնութիւնը, որ մեծ քանակութեամբ նաւթ ստանալուց որոշեալ պտղավճարը յայտնի տոկոսով զիջանվում է, երկար վիճաբանութեան նիւթ դարձաւ չորրորդ տարի ժամանակի ժողովականները միասին վերապահար համարելով այդ եղանակը թէ գանձարանի եւ թէ նաւթարդիւնաբերողների համար, ցանկութիւն յայտնեցին այդ արտօնութիւնը վերացած տեսնել սպազայում, հետեւեալ աճուրդների ժամանակ:

Ն. Դաւթեան

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, արքունական թատրոնում մեծ հասարակութիւն կար. ներկայացրին առաջին անգամ Վալենտին Էլօնգրիէն օպերան 4 դրօշմանով: Վալենտին այն հոյակապ կօմպօզիտօրն է, որ հակառակ իր տաղանդաւորութեան մուգիկայի, ստեղծեց այնպիսի մի դերմանական-հերոսականային մուգիկայի տիպ, որն իր կատարելութեամբ գերազանցում է միւս ժամանակակից գործերի մուգիկայից, դրա համար էլ կոչվում է վալենտինական մուգիկա: Նա միշտ գրում էր մեծ երկեր, օրինակ «Մայստերգինգերներ» օպերան մի օր ներկայացնելով չէ վերջանում, այլ շարունակ խաղում են երեք երեկոյ. մի պիէս, երեք երեկոյ:

Էլօնգրիէնի նիւթը մի լեգենդա է: Մի հերոս գնում է ժամանակ իր երկու զաւակներին (աղայ եւ աղջիկ) յանձնում է մի երիտասարդ հերոսի ինքնաստարութեան եւ դաստիարակութեան, վաղօրոք խոստանալով նրան իր աղջկայ ձեռքը: Մեծացած երեխաները մի օր անտառ են գնում եւ աղջիկը մենակ է վերադառնում տուն: Հերոսը պիտի գտնուի, որ նա գիտնում է կորցրել իր եղբորը՝ նրա գանդ խնդրու համար, եւ հրաժարվելով նրանից՝ ամուսնանում է ուրիշի հետ: Թագաւորի եւ ժողովրդի դատաստանին յանձնելով աղջկայ յանցանքը, հերոսը պահանջում է պատիւ նրան: Հենու աշխարհից դալով մի ասպետ, ազատում է այդ աղջկան փորձութիւնից, ամուսնանում նրա հետ եւ ստանալով նրա գանդ, երջանկացում է իր մարդասիրութեամբ ժողովրդին, երգունեցնելով հարսին՝ չը հարցնել փեսայի ով լինելու:

Հերոսի կինը, որը հերոսի հետ ամուսնանալու համար կորցնել էր տուել տղային անտառում, տեսնելով աղջկայ երջանկութիւնը եւ գրկվելով դանից, խորամանկութեամբ, իր վրէժը լուծելու համար, համոզում է աղջկան հարցնել եւ իմանալ իր փեսայի անունը եւ ծագումը: Հարցը միամտաբար այնպէս էլ անում է, բայց երգում էր զոքելու պատճառով գրկվում է իր ամուսնուց, որը մտնում է կարապի բերած նաւակը եւ քակելով կարապի չըղթան, գոչում է հարսին. «հա, այս կարապն է քո եղբայրը, մո յրան», ինքը անհետանում է, իսկ կարապից դուրս է գալիս աղջկայ կորած եղբայրը: Այս վարպետական նիւթը վրա գրել է Վալենտին իր հարուստ մուգիկան Գլխաւոր դերակատարներն էին՝ օր. Պապայեան—Էլսա աղջիկը, Բօրիսենկօ—ասպետ Լօնգրիէն, Պատոնօ—հերոսի կինը՝ Օրտուրա, Սվետլով—հերոսի ֆրիգիլի, եւ Սիբիրեակով—գերմանացիների թագաւոր Հինրիխ: Ուկրաինական (նախաբան) սկալից մի շատ բարդ ֆուգայով: Fuga երաժշտական գրութիւն է, որի մէջ մի եւ նոյն նախադասութիւնը նախ նուազում են, զիցուք, շուրթակները, յետոյ բաժնեբեր, փողերը եւ այլ գործիքները, անընդհատ շարունակելով իրանց երգը: Սրանով արդէն երեւում

է վազներականութիւնը: Առաջին գործողութեան մէջ դատաստանը շատ աղմկայից, բազմամարդ, խմբական եւ դրամատիկ երաժշտական է: Երկրորդը—գիշերը պալատի դիմաց եւ յետոյ հարսանիքի գնացքը: Նախ խաղաղ մուգիկա, բայց յետոյ շատ աղմկայի: Երրորդը—հարսանիքի սենեակ. ամուսինները գոռանք են երգում մի շատ բանաստեղծական մուգիկայի ֆօնի վրա: Չորրորդը—գարձաւ առաջին պատկերը թագաւորի եւ լորտ պալատականների ու ժողովրդի ներկայութեամբ. մուգիկան ամենագործող է: Բօրիսենկօ իր ամենագոյն գերը մինչեւ վերջը տեսնում է իր ժողովութեամբ: Օր. Պապայեան շատ հիմնաւոր մեջ Պատմութեան Սվետլով իրանց ոչ-համակրելի գերերը նոյնպէս լաւ տարան: Պիէսան պատրաստված է ջանքով եւ հետաքրքիր է:

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 17-ին «Մշակ» № 231-ի մէջ տպված էր ծխականի նամակը 1897 թվականին ինչ որ ասել եմ նորընտիր հաշուետեմներին Կուկիայի եկեղեցու պ. Եսայի Արքանաւանի երէցփոխանական հաշուետեմների վերաբերութեամբ՝ նոյնը եւ այսօր կրկնում եմ—ես գնում եմ 1892, 93 եւ 94 թվականների մատենները. այսօր էլ եթէ պ. «Ծխական» վերցնէ՝ կը գտնէ նրանց մէջ այս տեսակ հայր—1891 թվականից փոխանացած 1892 թ. մատենի մէջը—պարտք եկեղեցու վրա 544 ռ. 28 կօպէկ:

Այս է իմ տեսած Կուկիայի եկեղեցու մեծ գումարը—եւ այս, 1892 թվ. մուտքն է 3335 ռուբլի 28 կ., իսկ ծախք—3176 ռ. 34 կ., մնում է անձեռն դրամ 1893 թվ.—158 ռ. 94 կ. սոյն թվականի մուտքն է 2506 ռ. 85 կ., իսկ ծախքն է 2488 ռ. 30 կ., մնում է մնացորդ 1894 թվականին—18 ռ. 55 կ.—եւ 1894 թվ. մուտքն է 2740 ռ. 34 կ. եւ ծախքն է 2979 ռ. 54 կօպէկ, դեկտեմբերի վերջին մնում է պարտք եկեղեցու վրա 239 ռ. 20 կօպէկ: Այս մատենների հայրերը գնելուց յետոյ՝ յանձնեցի այն ժամանակվայ հաշուետեմներին վերադնելու, որոնք երեք ամիս իրանց մօտ պահելուց յետոյ՝ իմ տեսածից աւելի ոչինչ չը տեսնելով՝ վերադարձրին ինձ: Յանկայի է իմանալով թէ պ. «Ծխական» եւ թէ 1897 թվականի նորընտիր հաշուետեմները ինչ տեղ են դրած մի մեծ գումար, որից պակասորդ է ունեցել պ. երէցփոխարքայ մի խոշոր գումար, այն է 5,000 ռուբլի, քանի որ իմ եւ այն ժամանակվայ հաշուետեմների տեսածը եղել է սկզբից 544 ռ. 28 կօպէկ պարտք, եւ երեք տարուց յետոյ՝ պարտքից միայն պակասել է 315 ռ. 8 կօպէկ, մնալով պարտքի մայր գումար առ 1-ին յունվարի 1895 թվականից 239 ռ. 20 կօպէկ, իսկ եթէ 1897 թվականից անձ է եկեղեցական արդիւնքը եւ պակասել է «Ծխական» մատենիւր արած խոշոր գումարը, այդ մասին թող պատահական է պ. երէցփոխարք, որովհետեւ այդ իսկ թվականին եւ հրաժարվեցի գործակալական պաշտօնից:

Ղ. ա. ք. Խարազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Այժմ, երբ տարվայ վերջն է եւ բացված է «Մշակ» բաժանորդագրութիւնը, մենք ստանում ենք բազմաթիւ խնդրանքներ գիւղական հասարակութիւններից, չքաւոր աշակերտներից եւ ուսանողներից, որոնք խնդրում են իրանց ձրի ուղարկել «Մշակ» խմբագրութիւնը բուրժուական միջոց չունի բաւարարութիւն տալու այդ խնդրանքներին: Լաւ չէր լինի, որ ընթերցանութեան ծախս զիջուրների մասին մտածէին նրանք, որոնք միջոցներ ունեն օգնութեան հասնելու. անօգնական ընթերցողներին:

Մտնելուց առաջ եկած հիւանդութիւնները այն աստիճան տարածվել են Ուրիմում, որ նախապէս եւ Սիմֆերօպոլում դպրոցական վարչութիւնները հարկադրված էին առ ժամանակ փակել դպրոցները եւ արձակել աշակերտներին:

Հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, վրաց դերասանական խումբը, ի նպատակ երիտասարդ դերասան Եաթիբովի, նորոգեց վրաց բեմի վրա վաղուց չը խաղացված «Գարգինալ Բիշիլէ» յայտնի պատմական դրաման: Այդ պիէսը յայտնի է եւ հայ հասարակութեանը. սա կազմում էր Գ. Զաչկանի գլխաւոր դերերից մէկը: «Գարգինալ Բիշիլէ»—սալօնական պիէս է եւ այս տեսակ պիէսների համար հարկաւոր են անպայման կրթված, բեմի վրա իրանց պահել իմացող դերասաններ եւ չքիչ զգեստներ, եւ որովհետեւ սրանք բացակայում էին, այդ պատճառով էլ այս տեսակ պիէսները վրաց բեմի վրա սպասած տալուորութիւնը չէին թողնում հանդիսականի վրա: Այդ գիշերը հասա-

րակութեան ուշադրութիւնը կենտրոնացած էր գլխաւորապէս գատարակտ Լիւքսիւմ—Մեսխիլի վրա, որն առաջին անգամ էր հանդէս գալիս Թիֆլիսի վրաց հասարակութեան առաջ կարգիւ: Բիշիլէի գերում: Այդ տաղանդաւոր դերասանը մինչեւ ի՞նչ խաղում էր Շէքսպիրի երիտասարդ հերոսների դերերը, իսկ այժմ սկսում է փոխել իր ամպլուան, եւ տաղանդը դորդ է հանդիսանում ամեն պարագայում: Նա ամեն տեղ գեղեցիկ է եւ խելաւոր: Երգերի դերասանին այս դերը աղոյզեց, ժանաւանգ երրորդ եւ հինգերորդ գործողութիւններում: Ինքը բենեֆիցիանտը Դէ-Մօպրայի դերում անցոյն էր. մնացածները ըստ կարելոյն պահպանում էին անսամբլը: Թատրոնում բաւական ժողովուրդ կար:

Պետական խորհուրդը առաջիկայ տարվայ պետական հողային հարկը հաշել է 9,741,221 ռուբլի:

Առաջիկայ տարվայ մայիս ամսից Պետերբուրգում կը սկսվի հրատարակվի մի մեծ ամենօրեայ լրագիր—«Мировые Отголоски», որի խմբագիրները մէկը պէտք է լինի ականգնիկոս Կ. Կ. Արսենի:

Բօրչալուի գաւառի ՇՆՈՂ գիւղից մեկ գրում են. «Դեկտեմբերի 16-ին Բօրչալուի պ. գաւառապետը եկաւ մեր գիւղը՝ այստեղ կատարվող գողութիւնների դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու նպատակով: Հասարակութիւնից գող ճանաչված անձանց բոլորին քննութեան ենթարկեցին յետոյ, պ. գաւառապետը, գողերից մի քանիսին իր հետ վերցնելով, վերադարձաւ Շուպլէք»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԲՈՂՊԱՐԻՍՅԻՑ

Ֆիլիպօպօլ, դեկտեմբերի 14-ին

Նոյեմբերի 28-ին տեղիս նահանգական դատարանը մի շատ տխուր պատկեր էր ներկայացնում: Դատարանի սրահը լցվել էր հայերով, սակայն այնպիսի դատաւորութեամբ, որ ամբաստանաւորները աւելի բազմաթիւ էին, քան հանդիսականները:

Մտաւորապէս 30 հոգի կանգնել էին ամբաստանաւորների բաժնում: Գուցէ ընթերցողները կարծեն թէ մի նշանաւոր հարցի համար այդ 30 հայերը ոչխարի պէս շարվել էին բօլդար դատաւորների առաջ. ո՛հ, ո՛չ, մի խաբվիք, հայ բազմութիւնը չը դիմէ խոշոր հարցերով հնադարեւից եւ նրա լուծման աշխատել: Նա ինքը մանր է ծնվել, մանր է մնվել եւ մանր է մեծացել. նրա մէջ միայն ողորմելի «ես»-ն է զարգացել, ուժեղացել, թողնելով շատ անձուկ տեղ իր արդէն գաճած մտքին ու սրտին: Ահա պատճառը:

2—3 տարի առաջ Վեհուհի Արսէն վարդապետը այցելու հովի է կարգվում Բօլդարի մի հայերին. հովուի աքեմի տակ ծածկված այդ գայլը ուր որ գնում է՝ պատառ-պատառ է անում տիրացու-հայերի հօտը եւ իր փայլելուց տարիներ յետոյ դեռ եւս իր այցելութեան փէշքէշները օրվայ հարց են տալիս անտեղի միլիոնարները: Դատարանը չափը կորցնում է հայր սուրբը, եկեղեցու բեմը կուսակազմական կրքերի, աղաչական հաճոյախօսութիւնների ասպարէզ է դարձնում, գործնում է տեղացի սգէտ աղաների «գրեցնական» ատելութիւնը պանդուխտների դէմ, այնպէս որ էլ բաժակը լցվում է, պանդուխտները խօսքով եւ գրով բողբոջում են եւ նրանց աղօղում է Կ. Պօլսի պատրիարքաւորների բերել տալ Արսէն վարդապետի ծիսականաւորութիւնը արգելող հրաման: Բայց Արսէն վարդապետը չուտով յաղթողներին չէր, ուստի չէ յարգում բարձրից եկած վճիռները եւ իրան թեւ ու թիկունք է անում Թովմասեան վաճառականները. միւս կողմից Երկանեան անուն մի պարոն գրողում է պանդուխտներին եւ ահա մի քանի տաղվուր պանդուխտներ որովհետեւ գործադրել տալ պատրիարքաւորների հրամանը:

1899 թվ. յունվարին, մի կիրակի օր, հայոց եկեղեցում պատահում է վերջական ընդհարում: Արսէն վարդապետը իր համախոհ ջոջերով գուշակելով որ կարող է մի ընդդիմութիւն պատահել իրան, 30—40 հոգի խեղճ ու կրակ մարդիկ զինում է երկար ձողերով եւ բլրերով ու ինքն պատրաստվում է մտնել տաճարը: Վրա են հասնում 6 պանդուխտներ եւ վարդապետին աղաքարում են չը հակառակել եկած վճիռն: Արսէն վարդապետը տեսնելով որ

այդ մարդիկ շատ քիչ-որ են, ուզում է մի փառաւոր դաս տալ նրանց, եւ ահա պատրաստված մարդիկ յարձակվում են եւ սկսվում է խայտառակ կռիւ: Երկու կողմից բաղձաթիւ վիրաւորներ են լինում եւ եկեղեցու բակը ներկվում է արիւնով. աստիճանութիւնը միջանոքում է եւ ձերբակալում վարդապետի ցոյց տուած անձնաւորութիւնները. այդ բաւական չէր, կրքերից կուրացած եկեղեցականն ու աղաները կաշառքով զինում են թիւրք հիւպատոսին, օրպէս զի բանտարկեալները, իբրեւ նախկին փախտական ոտնադրոններ, բօլդար բանտից փոխադրէ Պօլսի բանտերը: Լուսամիտ կառավարութիւնը սակայն հասկանում է խաղը եւ մերժում է հիւպատոսի պահանջը:

Ջոջերի այդ ստոր վարմունքը զայրոյթ է պատճառում հասարակութեան եւ մի շարքով վայ մէջ զանազան դժոգութիւններ անելով, հայթայթում են 8000 ֆրանկ, որը գրաւ դնելով՝ աղատում են բանտարկեալներին: Այն ժամանակ Արսէն վարդապետը գանգաւ է տալիս տեղիս պատժական ատենին 6 պանդուխտներին դէմ, իբրեւ եկեղեցու արարողութիւնը խանգարողների (մինչեւ արարողութիւնը չէր սկսվել), իսկ իր ջոջերը—հայտարար դատաւորին, օրպէս թէ նոյն անձինք կանխատեսութեամբ իրանց ծեծել են եւ այլն: Արսէն վարդապետի գանգաւոր մի ամիս վերջը քննվում է, իսկ հայտարար դատաւորը վճիռ է արձակում պանդուխտների դէմ. 2-ը ազատ են արձակվում, 2-ը՝ 3 ամիս եւ միւս 2-ը՝ 1 ամիս բանտարկութեան դատաւարտվում:

Մի քանի յայտնի փաճառականների մի քանի անգամ նախապէս արած միջամտութիւնը՝ հաշտեցնելու համար խոռվեալ կողմերը՝ դուր է անցնում: Արսէնեանները յամառութեամբ մերժում են:

Պանդուխտները դիմում են նահանգական ատենին բեկանելու տրված անիւտը վճիռը եւ պատժելու իսկական յանցաւորներին, իսկ Թովմասեանները մի եւ նոյն ժամանակ խնդրում են սասակացնել տրված մեղմ պատիժները:

Ահա այդ ոչնչից «երեւելի» դարձած դատն էր, որ բերել լցրել էր Լուսաւորի թոռները արդարութեան տաճարը: Դատաւարութիւնը սկսելուց առաջ դատաւոր-նախագահը, բարի շնչուով, դիմում է երկու կողմերին եւ առաջարկում է հաշտվել: Ջոջերից մէկը պատասխանում է.

—Նահանգական դատարանի մէջ զակոն չը կայ հաշտվելու:

Նախագահը բարկանում է այդ անմիտ պատասխանի վրա եւ բացականչում.

—Ապա զակոն կայ եկեղեցում կռիւ սարքելու, ծեծելու եւ ծեծվելու. ամօթ չէ ձեզ, որ եկել, դատարան էք լցվել այսքան բազմութեամբ:

Պանդուխտներին ձրիաբար պաշտպանում էին փաստաբաններ: Դանչել եւ Իսմինեան. իսկ ջոջերի փաստաբանն էր մակեդոնացի Սոփիկով, 50 ոսկու վարձատրութեամբ, այս վերջինը իր խոր հմտութիւնը ցոյց տալու համար սկսեց քրքրել հազարաւոր նահատակների յիշատակը եւ լուսանքներ տեղալ թիւրքաւորների հասցէին ու ցոյց տալով պանդուխտներին իբրեւ սրկակաների, պահանջեց խիստ պատժել:

Իսկ աղաները անորոշանքով լսում էին իրանց փաստաբանին, չը մտածելով այն տխուր իրականութեան վրա, որ իրանց փողով թող էին տալիս մի հացկատակ օտարի իրանց աղգութիւնը նախատել: Վեր է կենում բօլդար վատաբան Դանչել ու մի ընդարձակ ճառով ջրելով հակառակորդի մեղադրանքները թիւրքաւորների մասին, խօսքը ուղղում է նրան:

«Սրկականը սրանք չեն, որոնց պաշտպանելը ինձ պատիւ եմ համարում, այլ դու, որ վատաբար թողնելով արիւնակիցներդ Մակեդոնիայում, թողած բուն հարցը, այստեղ, ազատ Բօլդարայում, նախատում ես քո աղգակիցների բաղդակիցներին» եւ այլն:

Պրօկուրօրը պահանջում է բարեփոխութեան ենթարկել հայտարար դատաւորի վճիռը:

Ընդհանուր կարծիք էր, որ երկու հակառակորդ կողմերն էլ հաւասարապէս պիտի դատաւարտվեն. բայց բօլդար դատաւորները աւելի հայասէր գտնվեցին, քան հայ մեծատունները. 2 օրվայ խորհրդակցութիւնից յետոյ բոլորն էլ անպարտ արձակվեցին, օրպէս զի վերջ լինի անօգուտ խոռվութիւններին:

Բօլդար դատաւորները այդպիսով բարոյական մի հիմնալի խրատ տուին Բօլդարայի հայերին՝ զօպել մանր կրքերը, վերջ տալ զլըրսեցիկ ճնրակների անմիտ հակառակութեան եւ փոխանակ դատարանների դռները դեպքերով եւ հարիւրաւոր ոսկիներ փչացնելու, օգտվել

մի մարդասէր երկրի շնորհած բարեկեցիկից, աղքատի մրցութեան մէջ մի պատուաւոր տեղ բռնելու համար:

Իսկ թէ բոլորահայերը որ աստիճան իւրացրել են ազատութեան բարեկեցիկը, այդ յաջորդ յօդուածներով կը տեսնենք:

Ա. Միսակեանյ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

—Անցեալ շաբաթ Կ. Պօլսում, Պանկալի անուանած թաղում, ուսաց դեպքան պ. Զիւնովիչի, դեպքանատան բոլոր պաշտօնեաների, ուսաց պահակներու հրամանատարներին եւ օֆիցերներին եւ ուսաց կօլոնիայի բոլոր անուանի անդամներին ներկայութեամբ կայացաւ ուսաց դպրոցի հանդիսաւոր բացումը:

—«Մայիսամի» լրագրին Մուշկի գրում են, որ այնտեղ հասել է կովկասեան գաղթականներին մի մեծ խումբ Դաղստանից եւ Չէչենիայից, որոնցից յետոյ գալու են էլ մի քանի հազար լէզգիներ եւ չըբէղներ: Նրանք բոլորն էլ կը բնակեցնվին լեռնային տեղերում ուսաց սահմանի երկարութեամբ:

—Դորոտլայից «Աւարախ» լրագրին գրում են, որ մահմետականներին մեծ թուով գաղթումը Բուսիսիայից դէպի Թիւրքիա ոչ թէ կրօնական շարժառիթներէն է առաջացած, այլ տնտեսական պատճառներէն: որոնց մէջ առաջին տեղն են բռնում անչափ հարկերը եւ հարկանանքի կեղծումները: Նոյն պատճառներով պէտք է բացատրել, լրագրի խօսքով, եւ մահմետականներին գաղթումը Բուսիսիայից եւ չէրքէզովիայից:

—Աւստրիական զօրքի բոլոր հրամանատարները ստացան զինուորական միասնորոշութեան հրաման որոնք հնարաւոր է զինադրել սօցիալիստական եւ անարխիստական պրօպագանդային, որ տարածվում է զօրքի մէջ՝ զօրանցները զանազան թերթիկներ եւ բրօշուրներ գցելով միջոցով: Վիեննայի զօրքի հրամանատարը, զեկալարվելով այդ առաջարկութեամբ, արդէն իր կողմից հրաման արձակեց օֆիցերներին, որ, չը բացատրելով սօցիալիզմի մ. անարխիզմի էությունը, պահանջեն զինուորներէն կատարել իրանց պարտքը—այն է ներկայացնել իւրաքանչիւր բրօշուրը իշխանութեան եւ բացի դրանից երբեմն երբեմն, առանց նախազգուշացնելու, յանկարծակի խուզարկութիւններ ենթարկել զինուորներին:

—«Morning Post»-ին հետազոտում են Կապիտալիստի, թէ գործերի դրութիւնը Կապի գաղթականութեան մէջ անյուսակալ է: Ամեն ինչ կախված է դէպքի եւ ուղղութիւնի: Երանականութիւնից, որ կայ այժմ ապստամբների ձեռքում, ենթադրում են, որ Ֆրիպպատուսին չըջանում բռնիքների միացել են 1500 հօլանդացի բնակիչներ: Ստանդուտ միջոցներ են գործ դրվում թշնամու խուժման առաջն անգամ համար, բայց մեծ երկիւղ կայ, որ բռնիքների զօրաբաժինները կաղթականութեան միւս չըջանները եւ հետզհետէ կապստամբներն Կապի հօլանդական ամբողջ ազդեցականութիւնը:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 դեկտեմբերի
ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ: Բօքսերներ նորից գրաւեցին Եգիպտոսում, որից անգլիացիները հեռացել էին դեկտեմբերի 12-ին:

ԿԱՐՆԱԼՎՈՒՆ: Բօքսերներ Գրեյգօյի, Վիսէլ-սի, Պրետորիուսի եւ Նէյվիգատի հրամանատարութեամբ շարունակում են առաջ գնալ դէպի Ֆրանկրայտ: Համաձայն զեկուցման նրանք գտնվում են Սալոնիկից մօտ Կոլոպոլումիսը շարունակվում են: Հաջորդակցութիւնը Ֆրանկրայտի հետ կարծած է: Դէպի Եգիպտոս ճանապարհորդող զինուորականները շարունակում են հալածանքը, բայց ձիւրն եւ ջորիները յօգնած են չափ:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ: Իրերի դրութիւնը Կապի գաղթականութեան մէջ խաղաղ է: Հօլանդական ազդեցականութիւնը դեռ եւս չէ ապստամբել, բայց գաղթականութեան սահմաններից ներս խուժած բօքսերներ ամեն տեղ աշակցութիւն են գտնում բնակիչներից: Անհրաժեշտ պահանջ կայ նշանաւոր չափով օդնական զօրքեր ուղարկելու Անգլիայից: Բօքսերների առաջապահները զըմտվում են գաղթականութեան արեւելեան մասում Մարեյսկուրդի մօտ, մօտ 25 մղոն կարգ-դօկից դէպի հիւսիս:

ՊԵՂԻՆ: Գնեւրալ Բալիւի արշաւանքը, որ ուղարկված էր Սիւտինֆոլ՝ օգնութիւն հասցնելու գնդապետ Գիւլիէին, որին սպանում էին չինական կանոնաւոր զօրքերը, այժմ վերջացած է: չինացիները փախան առանց կուր:

ԼՈՆԴՈՆ: Անգլիական բանկը բարձրացրեց դիվիդենդ 4%-ից մինչեւ 5%:

22 դեկտեմբերի
ՊԵՏԵՐԲՈՐԳ: Հաղթանաւորապէս յանձն առնողից: Աստարիանի նահանգի ծարեւակի գաւառի Վլադիմիրովա գիւղում, գիւղացի

Տետերիստիկովի ընտանիքում նոյեմբերի 4-ից մինչեւ դեկտեմբերի 2-ը մեռել են 9 մարդ: Սկզբում բժիշկները հիւանդութիւնը տիֆ համարեցին, բայց երբ դեկտեմբերի 8-ին նոյն ընտանիքում տեղի ունեցաւ էլի հիւանդութեան մի դէպք, այն ժամանակ նրանք կասկածեցին, թէ արդեօք ճիշդ են որոշել հիւանդութեան էությունը եւ դիմեցին Աստարիանի նահանգապետին: Անմիջապէս Վլադիմիրովա ուղարկեց բակտերիօլոգիայի մասնագէտ Կ. Ֆեոօր Զարբոստին եւ նահանգապետի կարգադրութեան տակ զրկեցին դրամական անհրաժեշտ միջոցներ մաքրողներ վարակել հիւանդութեան դէպի հիւանդութեան սկզբից հիւանդացի են ընդամենը 19 հոգի, որոնցից մեռել են 15 հոգի: Այժմ Վլադիմիրովայում կան 4 հիւանդներ եւ 12 անձեր, որոնք չիտնին են ունեցել հիւանդների հետ եւ իբրեւ կասկածելիներ գտնվում են հակողութեան տակ՝ առանձնացրած բնակարանում:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ: Բրիտանական զօրքերը դատարկեցին Էլեքսֆօնէյն եւ Ֆորէմալի իրանց ոյժերը կենտրոնացնելու նպատակով: Այս տեղերի բրիտանական բնակիչները տեղափոխված են բրիտանական բանակը Էլեքսֆօնէյն եւ Բօստ կայաւանի մօտ Մեծ քանակութեամբ արկղեր, որոնք կրում էին «բոստայր» կամ «վերնագիր», եւ պէտք է ուղարկվէին Ֆրանկրայտ, գրաւեցին Ֆրանկրայտը գրում եւ Բօստում եւ նրանց մէջ գտնվեցին 3000 փամփուշտներ, 500 կապուրիներ, եւ 150 ֆունտ զինամիտ: Հաջորդում են, որ 30 մղոն դէպի հիւսիս Մատեֆօնտէյն տեղի է ունենում կռիւ:

ԼՈՆԴՈՆ: Բօքսերում հասաւ Լօնդոն. նրան զինուորներին Ուէլսի պրինցն եւ Իօրիլ դուքսը: Կայարանում գտնվում էին շատ բարձրաստիճան անձեր եւ միմիկութեան հարկէ անդամներ: Բուկինգհամի պալատի ճանապարհին ամբողջ օդերոված օդընում էր Բօքսերում:

ՊԵՂԻՆ: Մի ժողովում դեպքանները վճեցին չը պատասխանել չինական կառավարութեան կողմից պետութիւնների յայտարարի մասին առաջարկված հարցերին, մինչեւ որ չինական լիազօրները չը ստորագրեն այդ պահանջները: Կապաններով բոլոր ձեւակերպութիւնները Մինչեւ այդ ժամանակ դեպքանները կը պատրաստեն մի յիշատակագիր այն մասին, թէ ինչ պէտք է կատարվի պատմութեան հարկէ կամ ուրիշ հարցերի վերաբերմամբ զրկած պայմանների կատարումը ապահովելու համար: Հէնց որ պետութիւնների միացեալ յայտարարը կը ստորագրվի խաղաղութեան կոմիտեաների կողմից այն մտքով, թէ նա ընդունվում է Զիւնաւանից, դեպքանները պաշտօնապէս կառավարկեն զօրաբաժինների հրամանատարներին դադարեցնել պատերազմական գործողութիւնները:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ: Գաղթականական չըջանները միջոցներ են ձեռք առնում յամենայն դէպս պատրաստ լինելու Գերիկներին Գրեյսթայտից եւ Սիւմաուտունից պատրաստում են տեղափոխել նաւերը:

ՕԴԵՍՍԱ: Այսօր երեկոյեան հասաւ «Տամատալա» չըգնաւոր, որ սաստիկ աշկոծութեան է ենթարկվել ծովում: Նաւի վրա ամեն ինչ բարեկարգ է:

ՌՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԻԳԱ, ձեր նամակը չենք ստացել:
ԲԵՆԵՎ, ի. Մ. Անկարող եղանք ստացել:
ԲԱՐՈՒ, Երկրային. կը ստացանք:
ԲԱՐՈՒ, Արաքսեան. Կարգացէք վերեւ պատասխանը:
ԲԱՐՈՒ, ՍԱՐԱՅԵՎ, Լ. Գրեգորեանց. ձեր փոխարքած 20 րոպէս 10-ը ուղարկեցինք: Վարձիւ խմբագրութեան:
ԲԱՐՈՒ, Ն. Գ. ձեր լիցած նամակը չենք ստացել:


ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՐ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Պետերբուրգի բժշկական վարչութեան թուրաւութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի, փոքրը—3 ր. 6 1 ր. 50 Կ:



ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփու: Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԹ ԿԱԹԵ
Երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սևութիւնը, մոռեքը, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ դեպքը չափաւոր են. մեծ սրտաւոր, արկղիկի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 Կ: Մախվում են բոլոր պարֆիւմերական եւ զեղաւազանական խմորները: Պիւսաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց ա. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան զեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Նրանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց եւ Բաղուս. նաեւ Միքայելեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի զեղատներում: Օտարաբաղաճապիներ պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 30—100

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻՍԿԱՆ ՆԱՒԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 3/16 յունվարի—չորեքշաբթի Միւհրիսի, կապիտան ՇԵԼՏ. Եւ այսպէս շարունակաբար, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, մօտ 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են անմիջապէս պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտալեպէին մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն զիմը ընկերութեան գործակառարներին:
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԳԱՐՍԻՆ, Նալէէմեայա ԹիֆլիսՈՒՄ—պ. Ո. Գ. Բարեկնէզանեան, Սիւնի փող. Ուշափարուիօյի եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—Կըր. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նալէէմեայա փողոց, տուն Կրասիւնիօյի, № 27: ՆՈՎՈՐՈՍՍՍԻՑԿԱ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Ն. Ն.) 10—20

СЕКРЕТЬ КРАСОТЫ ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ А.С.И.У.и.К. МОСКВА. 20 коп. кув. M. 109486

Թիֆլիսի Նաւարդիւնաւերական Ընկերութեան

Վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. փայտեղների, որ համաձայն Ընկերութեան բաժնետէրերի սոյն դեկտեմբերի 13-ին ներկայացրած յայտարարութեան նշանակվում է

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ
Դեկտեմբերի 31-ին, կիրակի օրը, ժամի 10-ին, քաղաքային խորհրդարանի դահլիճում Զրադման առարկաներն են՝ 1) պ.պ. բաժնետէրերի յայտարարութեան ընթերցումը եւ քննութիւնը 2) վարչութեան զեկուցումը ընկերութեան հաշիւները ներկայանելու համար ժամանակի որոշման մասին (Ե. Ն.—չ.) 2—3

ՀԱՇՈՒՆՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացի XII շրջանի ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական եւ գործարանական հաշուապահութեան ՌԻՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Նրկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, եւ եղած դէպքերում լսնան է առնում պաշտօնի առաջարկը:

ՊԱՐԱՊՈՒՆՔԻ ԱՌԱՎԱՆՆԵՐ ՆԸ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձևիկերի, հանդերձ նախնային արդիւնաբերական եւ կերօսիլի գործարանական հաշուետւութեան:
Բ) Առևտրական թուաբանութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Առևտրական եւ մուրհակների կանոնադրութիւն:
Ե) Գեղագրութիւն եւ ամենալատ ձեռքերի ուղղելը:
Պարապմունքները սկսվելու են 1901 թվ. յունվարի 15-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար շարունակվում են իւրաքանչիւր 2ՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող զիմնը դատար կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, Կ Ո Ւ Կ Ր Ա, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Никольская ул. № 46):
Վերադառնալու հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹիֆլիսՈՒՄ, Ներկայիկ մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: Գինն է 3 ր. 50 Կօպէկ: Օտարաբաղաճապիները գիրքը գնելու համար կարող են զիմը հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: (Ե. Ն. Ն.) 13—20